

Թիւնը լուրջ եւ կատարեալ միութեամբ մեր-
 ձենայ Հոռոմէական Եկեղեցւոյ, եւ գրէ անոր
 եւ ծանուցանէ Ձեր գաւառներու պէտքերը,
 պիտի տեսնէ այնուհետեւ անձին փորձով, թէ
 ըստ բաւականին պիտի գոհացուի Ձեր ժողո-
 վրդեան հոգեւոր պէտքերը, ինչպէս եղած է
 այս աշխարհի ուրիշ կողմերը: Այսպիսի խըն-
 դրոց շուրջը կարող է Ձեր Սրբութիւնը լիա-
 պէս տեղեկութիւն ստանալ այն Դոմինիկեան
 Հայրերէն, որոնք Նախիջևեան կը բնակին եւ
 պիտի տան Ձեզ ներկայս. անոնց ցոյց տուած
 ուղղութեան համաձայն գրեցէք առ Սուրբ
 Հայրն եւ առ Ս. Ժողովն: Առ այդ կը վստա-
 հացնեմ զՁեզ, թէ պիտի ընդունիք ամէն հա-
 մեստ եւ պատշաճ բաւականութիւնը եւն:

Հոռոմ, 4 Փետր. 1623:

Հակառակ այս յաճախակի թղթակցու-
 թեանց բանակցութիւնները չկրցան որոշ եզ-
 րակացութեան մը յանգիլ: Սուրբ Ժողովը
 միշտ վերապահ մնաց Մելքիսեդեկի հանդէպ:
 Երկրին մէջ այնպէս ծանր էր կաթողիկոսա-
 բանին տնտեսական եւ բարոյական, նաեւ քա-
 ղաքական դրութիւնը, որ ի յառաջագունէ
 արդէն կարելի էր գուշակել ձեռնարկութեան
 ճախող ելքը: Մելքիսեդեկ, որ կը հեծէր
 պարտքերու տակ, կորսնցուցած էր ժողո-
 վրդեան վստահութիւնը, եկեղեցականութեան
 մեծ մասը ունէր իրեն թշնամի: Անել կացու-
 թիւնը ստիպեց ի վերջոյ կաթողիկոսը, որ ա-
 թոռին իշխանութիւնը յանձնէ իւր եղբոր-